

21449

183

«ՌԱԶՄԻԿ»-ի գրադարան № 2

== ԿԱՆՈՆԱԳԻՐԻՔ ==

ՀԵՏԵՒԱԿ ԶՕՐԱԿԱԶՄԻ

356

4-21

356

4-21

№ 2 «ՌԱԶՄԻԿ»-ի գրադարան № 2

300

1706-44

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ՀԵՏԵՒԱԿ ԶՕՐԱԿԱԶՄԻ

(СТРОЕВОЙ ПЕХОТНЫЙ УСТАВ)

1003  
1706-44  
ԳԻՆՆ Է ՄԷԿ ԲՈՒՔ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. ՀՆՑ ԶԻՆԻ. ԽՈՐՀ. ԳՈՐԾ. ՄԱՐՄԵՆ

Թարգմանեց ռուսերէնից

ԼԵՒՈՆ ԼԻՍԻՆՍԿԱՅԻՆ  
Հ.Ս.Ս.Ր.Ա. Կուличная Библиотека  
7/31-1922

Иванна, Мясникова  
Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԱՇԽԱՏԱՆՈՐ» Գործ. 39.

1918

2010



Հետեւակ զօրակազմի կանոնագիրքը որոշում է հետեւակ զօրավարութեան պահանջները, տալիս է զօրակազմի օրինակները և զօրակարգերի հիմքերը, մատնանշում է բոլոր զինւորականների պետերի և շարքի զինւորների—պարտականութիւնները՝ այդ զօրակազմերի և զօրակարգերի մէջ, և մատնացոյց է անում այդ կազմերի և կարգերի մէջ գործելու և նրանց կառավարելու միջոց՝ երն և եղանակները:

Կռիւը պահանջում է զօրքից մէկ կողմից՝ խիստ դիւցիպլին և կատարելալ հոլատակութիւն գլխաւորի կամքին, միւս կողմից՝—ոչ միայն ղեկավարներից, այլ և հասարակ զինւորներից, նախաձեռնութիւն և ինքնագործունէութիւն՝ ընդհանուր նպատակին, բոլոր պայմանների մէջ, լաւագոյն կերպով հասնելու համար:

Ծանօթութիւն.—Թարգմանչից և ցանկ տես զրքի վերջը:

## ԶՕՐԱԿԱԶՄ ԵՒ ՆՐԱ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

1. Զօրակազմ (срой) կոչւում է մարդկանց սահմանած ձևով դասաւորութիւնը, միասին տեղաւորելու, շարժելու և գործելու համար:

ԾԱՆՈԹ. Զօրակարգ (порядок)՝ կոչւում է զօրակազմերի համակարգութիւնը՝ միասին գործելու համար՝ մի մարդու հրամանատարութեան տակ:

2. Այն զօրակազմը, ուր մարդիկ կանգնած են մէկը միւսի մօտ մի գծով, կոչւում է ռաբ (шеренга):

3. Զօրակազմի ծայրերը կոչւում են քե (фланг)՝ աջ եւ ձախ: Թեւերի անունները կազմի շրջումների ժամանակ մնում են անփոփոխ:

4. Զօրակազմի այն կողմը, ուր դարձած է մարդկանց երեսը, ունենալով աջ թեւ՝ աջից և ձախ թեւ՝ ձախից, կոչւում է ճակատ (фронт):

5. Երկշարք զօրակազմի մէջ двухшеренжный срой) երկրորդ շարքի մարդիկ կանգնած են առաջին շարքի մարդկանց ուղիղ ետեւը:—Շարքերը կոչ-



ւում են առաջին և երկրորդ. այս անունները դօրակազմի շրջումներին ժամանակ մնում են անփոփոխ:

Եթէ զինւորների թիւը չորս հոգուց պակաս է լինում, մի շարք են կազմում:

6. Երկու մարդ կանգնած մէկը միւսի ետեւ՝ կազմում են լրիւ կառք (полный ряд):

Եթէ առաջին շարքի մարդու ետեւ երկրորդ շարքում ոչ մի մարդ չէ կանգնած, այդ կարգը կոչւում է պակաս կառք (неполный):

Երբ առաջին շարքից մի մարդ պակասում է, տեղը բռնում է երկրորդ շարքի մարդը: Երբ կարգ է պակասում, զօրակազմը խտանում է (смыкается) դէպի ուղղութեան կողմը (сторона равнения):

Երբ զօրակազմը շրջւում է երկրորդ շարքի վրայ՝ պակաս կարգի մարդը անցնում է այդ շարքի մէջ:

7. Զօրակազմը կարող է լինել խիս (сложный), ցօր (разомкнутый), երկու դէպքումն էլ լինի մէկ կամ երկշարք, — և ցրիւ (разыпной), (կրակի ցրալ — стрелковая пия):

Խիս կազմի մէջ իւրաքանչիւր շարքի մարդիկ պահպանում են մէկը միւսից չորս մատաչափ հեռաւորութիւն՝ արմունկից արմունկ:

Նօւր կազմի մէջ — մարդկանց միջի հեռաւորու-

թիւը — առանցքը (интервал) մեծանում է մի քայլ կամ որքան հրահանգւած կը լինի:

Ցրիւ կազմի մէջ — մարդիկ պահպանում են իրար մէջ հրահանգւած հեռաւորութիւնը:

8. Մի անընդհատ զիծ կազմող խիտ կամ նօւր զօրակազմը կոչւում է բաց զօրակազմ (развернутый строй):

9. Խիտ կամ նօւր զօրակազմի մասերը, կանգնած մէկը միւսի ետեւ, կազմում են զօրախմբ (колонна): Զօրախմբի առջևի մասը կոչւում է զօրախմբի գլուխ, ետեւի մասը — պոչ: Առջևում կանգնած մասի առաջին շարքից մինչև նրա ետեւից կանգնած մասի առաջին շարքը եղած հեռաւորութիւնը՝ կոչւում է արածութիւն (дистанция): Զօրախմբի գլխից մինչև պոչ եղած տարածութիւնը կոչւում է զօրախմբի խորութիւն (глубина колонны):

Զօրախմբները կոչւում են նրանց կազմող զօրամասերի կամ նրանց գլուխը կազմող զօրամասի անունով: Յաճախ գործածուող զօրախմբները ստանում են կրճատ անուններ:

10. Բոլոր զօրակազմերի մէջ պէտք է պահպանել կատարեալ լուրթիւն և ուշադրութիւն: Ոչ ոք իրաւունք չունի առանց թոյլտուութեան կազմից դուրս գալու:

Խիս կազմի մէջ պէտք է կանգնել անշարժ,



նայել շիտակ, շարժման ժամանակ ոտքը պահել և պահպանել ուղղութիւնը շարքերի և կարգերի:

Նօսը կազմի մէջ պէտք է ոտքը պահել և ձիշտ ուղղութիւնը պահպանել միայն այն ժամանակ, երբ հրաման կայ:

Յրիւ կազմի մէջ՝ պետերը և զինւորները ստանում են որոշ ինքնուրոյնութիւն:

11. Բոլոր շարժումներն ու գործողութիւնները զօրակազմի մէջ կատարւում են պետի կօմանդով, հրամանով, պայմանական նշանով (условный знак) կամ ազդանշանով (сигнал):

12. Կօմանդ բաժանւում է նախապատրաստականի և կատարողականի: Նախապատրաստական կօմանդը պէտք է արտասանել ձիգ և պարզ. կատարողականը—բարձր, կտրուկ և աղբուռ: Ձայնը չափաւորել զօրակազմի տարածութեան համեմատ:

13. Հրամանը արւում է պետից անմիջապէս ձայնով, կամ աղիւտանոյի, թիկնապահի, կամ սուբհանդակի միջոցով, կամ ազդանշանի, հեռախօսի և այլ միջոցների օգնութեամբ: Կրակի շղթայի մէջ հրամանը կտրոզ է հաղորդել շղթայի գծով մէկ զինւորից միւսին. արշաւի ժամանակ—զօրասիւնի երկարութեամբ կարգից կարգ: Հրամանը պէտք է տալ կարճ, կտրուկ և որոշ, անպատճառ ցոյց տալով համեմակը նպատակը:

14. Ընդունւած են հետեւեալ պայմանական նշանները զօրակազմը զեկալարելու համար (վաշտից ոչ աւել):

ա) Ուշադրութիւն գրաւելու համար նախապատրաստական նշան—ձեռք վեր բարձրացնել:

բ) Սկսել շարժումը քայլով—ձեռք բարձիւն բարձման ուղղութեամբ:

գ) Զօրամասը վաղեցնել—մի քանի անգամ ձեռք բարձիւն բարձման ուղղութեամբ:

դ) զօրամասը կանգնեցնել—բարձրացրած ձեռք արագ վար իջեցնել:

ե) Փոխել ուղղութիւնը տեղում կամ շարժման միջոցին—ձեռք հօդի գոնական ձեռով ցարածել ուղղած ուղղութեամբ:

զ) Զօրասիւնը բաց անել—ձեռք բարձրացնել եւ բարձիւն աջ եւ ձախ գլխաւերելում:

է) Շղթայ կապել—երկու ձեռք պարզել աջ եւ ձախ, շղթայի նակասի ցանկացած ուղղութեամբ:

ը) Զօրամասը հաւաքել—պստի վեր բարձրացրած ձեռք:

թ) Զօրամասը պարկեցնել—մի քանի անգամ ձեռք ներքեւ քափանարել:

Բոլոր յիշւած նշանները կտրոզ են արւել նախ թրի, գլխարկի և այլ առարկաների օգնութեամբ:



Բոլոր զինուորները անմիջապէս կատարում են նշանով հրահանգածը:

15. Շեփորով հնչեցրած ազդանշանները վերաբերում են պետերին, բացի մէկը միւսի հակից տրուող ազդանշաններից՝ հաւաքի՛ր և վազի՛ր, որ անմիջապէս կատարում են բոլոր զինուորները:

Բացի շեփորով հնչեցրած ազդանշաններից, կրակը դադարեցնելու համար զորք են անում սուլիչ:

## Կ Օ Մ Ա Ն Դ

Առանձին վարժարիւն:—Одиночное учение.

- |                         |              |
|-------------------------|--------------|
| 16. Становись!          | ԿԱՆԳՆԻՐ:     |
| 17. Равненіе на—право!  | Պատիւ ԱՁԻՑ:  |
| „ на—лѣво!              | Պատիւ ՁԱԽԻՑ: |
| 18. Ложись!             | ՊԱՌԿԻՐ:      |
| Встать!                 | Ո՛ՔԻ:        |
| 19. Вольно! оправиться! | Ա ՁԱՏ:       |
| Смирно!                 | ՉԳԱՍՏ:       |
| 21. Напра—во!           | Աջ—ԿՈՂՄ:     |
| Налѣ—во!                | Ձախ—ԿՈՂՄ:    |
| Пол—оборота напра—во!   | Կէսաջ—ԿՈՂՄ:  |
| Пол—оборота налѣ—во!    | Կէսձախ—ԿՈՂՄ: |
| Кру—гом!                | ՇԵՐ—ՁԻՐ:     |
| 23. Шагом—марш!         | Քայլ—ՄԱՐՇ:   |
| 26. Кругом—марш!        | Շրջան—ՄԱՐՇ:  |
| 27. Бѣгом—марш!         | Վազք ՄԱՐՇ:   |
| 29. Шеренга—стой!       | Կանգ—ՆԻՐ:    |



- Շարժի փարձարիւն:—Шереножное учение.
54. Шеренга—становись! Շարք—ԿԱՆԳՆԻՐ:
55. На первый и второй  
расчитайся!  
По порядку разесчитайся!  
(Справа по четыре раз-  
считайся!.. Առաջին—Երկրորդ  
Համ—ՐԻՐ:  
Հաշ—ԻՐԻ:  
Աջից չորսական  
Հաշ—ԻՐԻ:)
60. 1) Равняйся! ՈՒՂՂԻՐ (դեպի Ա.Ձ,  
դեպի ՁԱն, ՄԻՁԻՆԻՆ)  
2) Смирно! ԶԳԱՍՏ:
64. Шеренга, налѣво (напра- Շարք, դեպի ձախ (դե-  
во, от середины, на պի աջ, միջինից, այս-  
столько то шагов ра- քան քայլ) հոս-  
вом—кнись! րա—ՑԻՐ:
65. Шеренга, направо (налѣ- Շարք դեպի աջ (դե-  
во, к середине) сом— պի ձախ, միջինին)  
кнись! խլտա—ՑԻՐ:
67. В двѣ шеренги стройся! Երկու շարք կապ—ՄԻՐ:  
В одну шеренгу стройся! Մի շարք կապ—ՄԻՐ:



68. Равненіе на право! *Ուղղութիւն դէ-  
պի աջ:*
- „ на лѣво! *Ուղղութիւն դէ-  
պի ձախ:*
- „ на середину! *Ուղղութիւն  
միջինին*
69. На такой то предмет! *Այս ինչ առարկայի  
վրայ:*
- На меня! за мной! *Ինձ վրայ: Ինձ հետ*
71. а, 1) Шеренга стройся *Շարք, շարւիր ձախ*  
лѣво (вправо) *(աջ)*
- 2) Шагом (бѣгом) марш! *Քայլ (վազք) — ՄԱՐՇ:*
- б, 1) Шеренга, на такой *Շարք, այս ինչ ա-*  
то предмет *ռարկայի վրայ:*  
в право! (лѣво)! *ԴէՊի Աջ (ԴէՊի ՁԱԽ)*
- 2) (Бѣгом) Равняйся! *(Վազք) ՈՒՂՂԻՐՔ:*
- в, 1) Шеренга, лѣвое *Շարք, ձախ (աջ) թի*  
(правое) плечо вперед *առաջ:*
- 2) И шагом — марш (на- *Քայլ — ՄԱՐՇ: (Քայ-*  
ходу марш!) *լիու ժամանակ  
ՄԱՐՇ):*

*Ձոկաւի վարժարան. — Вводное учение.*

89. Ряды — вдвой! *Ձորս շարք կադ — ՄԻՐ:*
90. Ряды стройся! *Երկշարք կադ — ՄԻՐ:*
94. Со ставь! *Բուրգեր կադ — ՄԻՐ:*  
Положить ружья! *Դիր ՀՐԱՅԱՆԸ:*  
В ружье! *Ի Ձէն:*
99. 1) Ввод, справа (слѣва) *Ձոկաւ, աջից (ձախից)*  
по отдѣленіям, *բաժանմունքներով,*
- 2) Шагом марш! (на хо- *Քայլ — ՄԱՐՇ (քայլե-*  
ду марш!) *լու ժամանակ —  
ՄԱՐՇ):*
100. 1) Отдѣленіями лѣвыми *Բաժանմունքներ,*  
(правыми) плеча вперед! *ձախ (աջ) թի առաջ:*
- 2) Шагом марш! (марш!) *Քայլ ՄԱՐՇ (ՄԱՐՇ)*
- 3) Ввод, стой! плн *Կանգ — ՆԻՐ կամ  
прямо — ՅԱ ՌԱՋ:*
101. 1) Ряды стройся! *Երկշարք կադ — ՄԻՐ:*
- 2) Отдѣленія стройся *Բաժանմունքներով*  
лѣво (вправо). *շարւիր ձախ (աջ)*



- 3) Шагом марш! *Քայլ ՄԱՐՇ*  
а(рш!) *(ՄԱՐՇ) :*
- 102 1) Ввод. на пра—во! *Ջոկատ աջ — ԿՈՂՄ*  
2) Отфелениями правыя *Բաժանմունքներ աջ*  
(лѣвыя) плечи *(ձախ) թև*  
вперед! *առաջ.*
- 3) Шагом марш! *Քայլ — ՄԱՐՇ*  
(марш!) *(ՄԱՐՇ)*
- 4) Прямо! *ՅԱՌԱՋ.*
103. 1) В в.д. стройся влѣ- *Ջոկատ, շարւիք*  
во (вправо) *ձախ (աջ)*  
2) Шагом — марш *Քայլ — ՄԱՐՇ*  
(марш!) *(ՄԱՐՇ)*
104. 1) По головному отдѣ- *Առջևի բաժանմուն-*  
лению, ввод. строй- *քին, Ջոկատ շարւիք*  
ся влѣво (вправо) *ձախ (աջ)*  
2) Марш! *ՄԱՐՇ:*
105. 1) Ряды стройся *Երկշարք կազ — ՄԻՐ*  
2) Ввод, стройся влѣ- *Ջոկատ շարւիք*  
во (вправо) *ձախ (աջ)*  
3) Шагом (бѣгом) *Քայլ (վազք) —*  
марш! *ՄԱՐՇ:*
- 108 1) Ввод. правое (лѣ- *Ջոկատ, աջ (ձախ)*  
вое) плечо вперед, *թև առաջ.*  
2) Шагом марш! *Քայլ — ՄԱՐՇ*  
(марш!) *(ՄԱՐՇ) :*  
3) Прямо! *ՅԱՌԱՋ.*
143. Ко мнѣ! (сбор) *ՀԱՒԱՔ (Ինչ ՄՕՏ):*

*Վաշի վարժարիւն:* — Ротное учение.

170. а, 1) Рота, на такой-то *Վաշտ, այս ինչ առար-*  
предмет — вправо! *կայի ուղղութեամբ,*  
(влѣво!) *Դէղի Ա.Ջ (Դէղի ՁԱԽ)*
- 2) Равняйсь, *Ո. ՀՂԻԻՐ:*  
Смирно! Прямо! *ԶԳԱՍՏ, ՅԱՌԱՋ, կամ*  
или стой *կանգ — ՆԻՐ:*
- б, 1) Рота, правое (лѣ- *Վաշտ, աջ (ձախ)*  
вое) плечо вперед *թև առաջ.*  
2) Шагом — марш! *Քայլ — ՄԱՐՇ*  
(марш!) *(ՄԱՐՇ):*
174. 1) Рота, справа (слѣва) *Վաշտ, աջից (ձախից)*  
во вводящую колонну *կազմի քի Ջոկատներով.*  
2) Шагом (бѣгом) марш *Քայլ (վազք) ՄԱՐՇ:*
175. 1) Рота, справа (слѣва) *Վաշտ, աջից (ձախից)*  
по-взводно! *Ջոկատներով.*  
2) Шагом — марш! *Քայլ — ՄԱՐՇ*  
(марш!) *(ՄԱՐՇ).*  
Под — оборота налѣ — *Կէս ձախ — ԿՈՂՄ*  
во! (напра — во)! — *(Կէս աջ — ԿՈՂՄ)*



- в пол—шагај  
3) Прямо! или стой!  
177. 1) Ряды стройся!  
2) Влѣво (вправо) во  
взводную колонну.  
3) Шагом (бѣгом)  
марш! (марш!)  
Прямо! или стой!  
178. 1) Рота, справа (саѣва)  
по отдалені м.  
2) Шагом—марш!  
(марш!)  
179. 1) Рота, направо  
2) Ряды, вздой  
3) Взводами правыя  
плечи вперед  
4) Шагом—марш!  
(марш!)  
Прямо!  
180. 1) Рота, влѣво (впра-  
во) во взводную  
колонну,

ԿէՍ—ԳԱՅԼ  
ՅԱՌԱՋ Կամ Կանդ—  
ՆԻՐ:

Երկշարք կադ—ՄԻՐ.  
Ղոկատներով շարքեր  
ձախ (աջ)  
Քայլ (վազք)  
ՄԱՐՇ, (ՄԱՐՇ)  
ՅԱՌԱՋ Կամ Կանդ—  
ՆԻՐ:

Վաշտ, աջից (ձախից)  
բաժանմունքներով.  
Քայլ—ՄԱՐՇ:

Վաշտ, աջ—ԿՈՂՄ  
Երկշարք կադ—ՄԻՐ  
Ղոկատներով աջ  
Թև առաջ  
Քայլ—ՄԱՐՇ  
(ՄԱՐՇ)  
ՅԱՌԱՋ:

Վաշտ, Ղոկատներով  
շարքեր ձախ (աջ),  
կոլոննա,

2) Шагом--марш!  
(марш!)  
7/11. 1922

182. 1) Рота, стройся влѣво  
(вправо),  
2) Шагом (бѣгом)—  
марш! (марш!)

Վաշտ, շարքեր  
ձախ (աջ)  
Քայլ (վազք)—  
ՄԱՐՇ (ՄԱՐՇ):

183. 1) Рота, стройся влѣво  
(вправо),  
2) Шагом (бѣгом)—  
марш!

Վաշտ, շարքեր  
ձախ (աջ)  
Քայլ (վազք)  
ՄԱՐՇ:

184. а, 1) Рота, стройся  
влѣво, (вправо)  
2) Бѣгом—марш!

Վաշտ, շարքեր  
ձախ (աջ)  
Վազք—ՄԱՐՇ:

б, 1) По головному вз-  
воду, рота, строй-  
ся влѣво (вправо)  
2) Марш! (бѣгом—  
марш!)

Առջևի Ղոկատին,  
վաշտ շարքեր  
ձախ (աջ)  
ՄԱՐՇ—(Վազք—  
ՄԱՐՇ):

187. По взводно—  
Стройся!

Ղոկատներով—  
ԿԱԶՄԻՐ:

189. По такому-то взводу  
в колонну стройся

Այս ինչ Ղոկատին  
գործարին ԿԱԶՄԻՐ:



1903  
1235



# ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Կ Ր Ա Կ:

72. Խիս բարձր կրակել կարելի է միայն համազարկերով (զալպով), իսկ նուր բարձր—համազարկերով կամ հատ-հատ:

Կրակը սկսելու կամ դադարեցնելու կամանները մատնանշած են առանձին վարժութեան մէջ (յօդ. 36—39): Բայց սակաւ հատ հատ կրակի համար պէտք է հերթ նշանակել: Հերթ նշանակելու համար տրուում է կամանը:

Աջից (կամ ձախից) սակաւ—ԿՐԱԿ!

Այս կամանով զինուորները պէտք է առանց շտապելու նշան առնեն և կրակեն հերթով:

Փամփուշտների որոշեալ թւով և յաճախակի կրակը վարել առանց հերթի:

ՏՐԻԻ ԶՕՐԱԿԱԶՄԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ:

73. Յրիւ զօրակազմ (կրակի շղթայ)

զործ է ածուում թշնամուն լաւագոյն կերպով կրակով զնասելու, զինուորներին կրակելու ամենամեծ յարմարութիւններն տալու և՛ թշնամու կրակից կորուստները պակսեցնելու համար:

74. Յրիւ զօրակազմի մէջ 4—6 զինուոր կազմում են օղակ (звено). 2—4 օղակ կազմում են—բաժանմունք (отделение). 2-4 բաժանմունք կազմում են ջոկատ (взвод) 2—4 ջոկատ կազմում են—վաչտ (рота):

75. Ամեն մի զինուորին, առանձին կամ զօրաբաժնով, պէտք է վարժեցնել բոլոր ներքե յիշած (յօդ. 78) պարտականութիւնների մէջ, որ նա ունի ցրիւ զօրակազմի զործողութիւնների ժամանակ՝ զանազան պայմանների մէջ. առաջխաղացման, գրոհի, պաշտպանութեան, նահանջի միջոցին. այս ամենը՝ տարբեր միջավայրերում, թշնամուց զանազան տարածութիւնների վրայ, թշնամու զանազան զործելակերպերի ժամանակ, իր հարեան զօրամասերի զանազան զրութիւնների միջոցին և այլն:



76. Վարժեցնելու ձևերը՝ վարժեցնողի ընտրութեանը պէտք է թողնել. բայց պէտք է ամեն մի զինուորին առանձին առանձին գործնականապէս քննել տեղի վրայ, շղթայի մէջ նրանից պահանջած բոլոր պարտականութիւնների վերաբերմամբ:

77. Յըիւ զօրակազմի մէջ ամենքը պէտք է պահպանեն լռութիւն, ուշադիր լինեն գլխաւորի ձայնին և նշաններին և նոյն ճշտակատարութիւնը ունենան, ինչպէս խիտ զօրակազմի մէջ:

Կրակի շղթայի մէջ զինուորները տատնում են ինքնուրոյնութիւն՝ իրանց համար զիրք ընտրելու համար, ինչպէս տեղում, այնպէս էլ շարժման միջոցին:

78. Զինուորի պարտականութիւնները ցրիւ զօրակազմի մէջ՝

1) Պէտք է հասկանալ իր օղակի, բաժանմունքի, ջոկատի և վաշտի մարտական նպատակը:

2) Պէտք է միշտ կապ պահպանել իր օղակի ընկերներին հետ, այս ինքն՝ հնարա-

ւորութիւն ունենալ նրանց տեսնելու և լսելու, շղթայի զծով տրւող հրամանները մէկ հարևանից ստանալու և միւս հարևանին հաղորդելու. հետևել թշնամու և իր հարևանների գործողութիւններին, իմաց տալով մօտակայ գլխաւորին իր նկատածի մասին:

3) Պէտք է բոլոր զէպքերում օգնութիւն և օժանդակութիւն հասցնել իր մօտակայ ընկերներին, ինչով կարելի է՝ կրակով, սւինով, թիով, կամ անմիջական օգնութեամբ (օրինակ՝ դժւարանցանքի խոչընդոտ անցնելու ժամանակ):

4) Ոչ մի պատրւակով ինքնակամ չթողնել իր տեղը շղթայի մէջ: Եթէ զինուորը վիրաւորւի, — չպէտք է իր ընկերներին խանգարի իրանց պայտականութիւններն կատարելու, այլ յայտնելով մօտակայ գլխաւորին, պէտք է գնաց նրա թոյլտուութեամբ վերաբուժական կայանը, կամ սուղաց ուր է մի ծածկւած տեղ և սպասէ մինչև բժշկական օգնութիւն հասնի, — իր



փամփուշտներն նախօրօք հարեան զինուոր-  
ներին տալով:

5) Պէտք է ընտրել որոշւած նշանի  
վրայ կրակելու յարմար դիրք, որը  
հնարաւոր եղածին չափ ծածկւած պէտք է  
լինի թշնամու աչքերից և կրակից: Դրա  
համար կարելի է, մնալով իր հարեանների  
մէջ եղած տարածութեան սահմաններում,  
մի քիչ առաջ, աջ կամ ձախ շեղւել, ա-  
ռանց խանգարելու շղթայի ճակատի ընդ-  
հանուր ուղղութեանը և հարեան զինուոր-  
ների դործ դութեանը:—Պէտք է սարքել  
յենարան իր հրացանի համար:—Երբ հրա-  
ման կայ, կամ հարկաւոր գէպքում սեփա-  
կան նախաձեռնութեամբ,—սարքել՝ եղած  
գործիքների, հողով լցրած տոպրակի և այլ  
միջոցների օգնութեամբ, պատասպարան  
թշնամու կրակից և տեսողութիւնից:

6) Պէտք է կրակ բանալ պետի հրամա-  
նով կամ կօմանդով: Միայն այն տարա-  
ծութիւնների վրայ, երբ գուժ է ածուում  
մշտական նշանացոյց (постоянный при-

цѣл—400—600 և պակաս քայլ), կարելի  
է ինքնուրոյն կերպով կրակ բանալ, ան-  
ձամբ ընտրելով նշանը և կրակի արագու-  
թիւնը, եթէ կրակելը արգելւած չէ:

7) Երբ կօմանդ է լինում՝ սակաւ կՐԱԿ,  
պէտք է կրակել բաժանմունքի պետից կամ օ-  
ղակի զլխաւորից նշանակած հերթով:—Երբ  
կօմանդ է լինում—յ ա ճ ա խ—կՐԱԿ:—կր-  
ակել առանց հերթի:—Բոլոր գէպքերումն  
էլ պէտք է ուշադրութեամբ նշանացոյցը  
(պրիցէլը) սարքել, ճիշտ նշան առնել, խը-  
նայել փամփուշտները և հոգալ նրանց պա-  
շարը լրացնելու մասին, վերցնելով փամ-  
փուշտը շարքից դուրս ելածներից. երբ  
սպառւած է փամփուշտի պաշարի կէսը,  
պէտք է այդ մասին տեղեկացնել օղակի  
զլխաւորին:

8) Չոկատի կամ բաժանմունքի պետի  
սուրոցով պէտք է իսկոյն կրակելը դադա-  
րեցնել և նայել դէպի պետը:

9) Երբ օղակը, բաժանմունքը կամ շո-  
կատը տեղափոխւում է, զրանց մէջ եղած



ամեն մի զինուոր պէտք է պահպանի պետի որոշած ուղղութիւնը և պահի իր և հարեաններին մէջ սահմանուած հեռաւորութիւնը: Նա պէտք է սակայն օգտուի տեղի առանձնայատկութիւններին՝ շարժումը ծածուկ և յարմար դարձնելու համար: Հրացանը այդ միջոցին տանել ոտքի մօտ կամ ուսից կախած, ինչպէս որ յարմար է:

Ամբողջ զօրամասով միասին վազելու ժամանակ, երբ կօմանդ է լինում ՅԱՌԱՋ ՎԱՉԻՐ! պէտք է արագ վեր թռչել և սլանալով վազել ցոյց տւած ուղղութեամբ, կամ դէպի նշանակած առարկան, կռանալով եթէ հարկաւոր է, թշնամու կրակին մեծ նշան չը դառնալու համար:—Երբ կօմանդ է լինում ԿԱՆԳՆԻՐ!—իսկոյն յարմարելով վայրին, ինչպէս ցոյց է տրւած 5-րդ կէտի մէջ:

Մէկ-մէկ վազելու կամ սողալու ժամանակ պէտք է ինքնուրոյն կերպով ընտրել լաւագոյն ճանապարհը, և ժամանակաւոր դադարներին տեղերը՝ նշանակած վայրը

կամ ցոյց տւած ուղղութեամբ՝ տեղափոխելու համար:

10) Գրոհի (ատակայի) շարժման համար, երբ կօմանդ են տալիս—ՅԱՌԱՋ!—պէտք է արագ վեր թռչել և գնալ պետի ցոյց տւած ուղղութեամբ, շարունակելով, եթէ չէ արգելւած, գնդակահարել թշնամուն, կանգնած նշան առնելով: Երբ հրաման կայ գրոհի գնալ առանց կրակելու, պէտք է գնալ արագաքայլ, առջևինների վրայ ուղղութիւն պահելով:

Երբ կօմանդ է ՈՒՌԱ!,—պէտք է «ուռա» աղաղակով, սրընթաց, յարձակւել թշնամու վրայ սկիւնամարտի, վազելիս խտանալով դէպի մօտակայ պետը:

11) Երբ ժամանակ կամ հնար չի լինում պետի հրամանների (կօմանդի, նշանների) սպասելու, պէտք է վարել ինքնուրոյն, հոգալով ամենից առաջ՝ գործողութիւնների ընդհանուր նպատակին հասնելու



և թշնամուն մեծագոյն կորուստը պատ-  
ճառելու մասին:

12) Հարկ եղած դէպքում պէտք է կանգ-  
նել սպանւած կամ վիրաւորւած պետի  
տեղը և շարունակել նրա սկսած գործը:

## ՋՈԿԱՏԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ԽԻՏ ԶՕՐԱԿԱԶՄ:

ՋՈԿԱՏԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՇԻԻԸ:

79. Զոկատը շարժւում է՝ իր մասերը  
կազմող բաժանմունքներով: Բաժանմունք-  
ները շարւում են երկու շարք և կանգ-  
նում են կողք կողքի, աջից ձախ, իրանց  
համարների կարգով: Բաժանմունքների  
մշտական պետերը պէտք է ղեկավարեն ի-  
րանց բաժանմունքները:

Պակաս կարգերը չպէտք է բաժանմունք-  
ների թեւերին լինեն:

Մանօր. Նաղաղ ժամանակ, եթէ հարկա-  
ւոր է, բաժանմունքների կարգերի թիւը  
կարելի է հաւասարեցնել, այսպէս՝ 16 և ա-  
ւելի կարգ ունեցող շոկատը կարելի է բա-  
ժանել 4 բաժանմունքի, 12—15 կարգ ու-



նեցողը—3 բաժանմունքի, 8—11 կարգ ունեցողը—2 բաժանմունքի, իսկ պակաս թիւ ունեցող ջոկատը համարել իբրեւ մի բաժանմունք:

80. Բաժանմունքները պէտք է բաժանել օգտակների (գւէնօ), ամեն մի օգտակ պէտք է ունենայ 2—3 կարգ. ամեն մի օգտակի մէջ՝ մէկին պէտք է իբրեւ գլխաւոր նշանակել. մի բաժանմունքի օգտակները պէտք է ունենան իրանց համարները:

Բաժանմունքների պետերը չեն մտնում օգտակների հաշւի մէջ:

81. Զոկատի կարգերը, աջ թևից սկսած պէտք է առաջին և երկրորդի համարել, այդ հաշւի մէջ առնելով նաև բաժանմունքների պետերին, առաջին բաժանմունքի պետից բացի (յօդ. 55):

82. Զոկատի պետի տեղը այնտեղ է՝ ուր նա ամենայարմար կերպով կարող է կօմանդ անել և կատարողութեանը հետևել:

Եթէ ջոկատը մի սպայ է կառավարում, ջոկատի ենթասպան, պէտք է կանգնի ձախ թևի վրայ, առաջին շարքի մէջ:

83. Բաժանմունքների պետերի տեղերը՝ իրանց բաժանմունքների աջ թևի վրայ են, առաջին շարքում: Երբ ջոկատի պետը կանգնած է ջոկատի աջ թևի վրայ, առաջին բաժանմունքի պետը պէտք է կանգնի նրա ետևից երկրորդ շարքում և բռնի նրա տեղը, երբ նա շարքից դուրս է գալիս:

Բաժանմունքների պետերը կօմանդ անելու համար շարքից չպկտք է դուրս գան, այլ միայն երեսը դարձնեն դէպի շարքը և կօմանդ անեն կիսաձայն (յօդ. 12):

Կ Ր Ա. Կ Ը:

109. Զոկատի բաց զօրակազմից կարելի է կրակել հետևեալ կերպով՝ 1) խիտ զօրակազմից—միայն համադարկերով (զալպերով), կանգնած կամ չոքած. 2) նստ զօրակազմից—թէ համադարկերով և թէ հստ հատ, կանգնած, չոքած կամ պառկած:

110. Կրակելը պէտք է սկսել և դադարեցնել՝ տառնձին (յօդ. 36—39) և շարքի



(յօդ. 72) վարժութիւններէ մէջ յիշած կօմանդներով և կանոններով, բայց՝ հետեւեալ փոփոխութիւններով՝.

1) Զոկատի պետը, նախապատրաստական—պատ—(պատ-րաստ!) կօմանդը տալով, պէտք է անցնի Զոկատի ետև և կանգնի աջնտեղ, որտեղից աւելի լաւ կը լսի նրա կօմանդը և աւելի յարմար կարելի է զինւորներէ գործողութիւններին և կրակի ազդեցութեանը հետեւել—Ետևի շարքի զինւորները՝ մի քայլ ձախ և առաջ պէտք է անեն, որպէսզի կանգնեն՝ առջևի շարքի մարդկանց մէջ եղած առանցիկների դիմաց, իսկ երբ կօմանդ է տրուում, պառկած՝ նըրանք պէտք է մտնեն այդ տարածութիւնների մէջ:

2) Երբ կատարողական կօմանդ է լինում—ՐԱՍՏ (պատ-րաստ!)՝ — բաժանմունքների պետերը և Զոկատ չկառավարող ենթասպան նոյնպէս պատրաստում են հրացանները:

3) Հան-ՓԱՄՓՈՒՇՏԸ, կամ ԴԱԴԱՐ, կօմանդը կատարելուց յետոյ, իսկ եթէ կրքակում կին չորձած կամ պառկած—ՈՏՔԻ—կօմանդից յետոյ—ամենքը պէտք է բըռնեն իրանց տեղերը:

## ՅՐԻՒ ԶՕՐԱԿԱԶՄ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ:

111. Յրիւ կազմի մէջ Զոկատի բաժանմունքները դասաւորուում են կողք կողքի. մարդկանց միջև եղած հեռաւորութիւնը կախած է՝ Զոկատին յանձնւած շրջանի մեծութիւնից, շղթայում գտնող մարդկանց քանակից և վայրի պատասպարաններից:

112. Զոկատների բաժանմունքները, բաժանմունքների օղակները և առանձին զինւորները՝ տեղին լաւագոյն կերպով յարմարելու համար, կարող են ճակատի ընդհանուր դժից մի քիչ արաջանալ, մի քիչ շեղւել աջ կամ ձախ, բայց պէտք է զգու-



շահան մի տեղ կուտակելուց, հարեաններն կրակը խանգարելուց և նրանց հետ կապը խզելուց:

113. Զոկատի և բաժանմունքների պետերը պէտք է գտնուեն իրանց շրջանների սահմաններում՝ այնտեղ, որտեղից կարելի է ամենայարմար կերպով ստորադրեալ զինւորներին՝ ղեկավարել և մարտի դաշտին հսկել: Օղակների գլխաւորները պէտք է գտնուին շղթայում իրանց օղակների զինւորների մէջ,

Զոկատը չկառավարող ենթասպան գլխունում է այնտեղ, ուր կը հրամայի շոկատի պետը:

### ՇՂԹԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ:

114. Զոկատի պետը ղեկավարում է շոկատի շղթան, իսկ բաժանմունքի պետերը իրանց բաժանմունքները՝ կօմանդներին, հրամաններին և պայմանական նշաններին,

ներին միջոցով: Բացի այդ՝ հատհատ կրակը զադարեցնելու համար կարող են սուլիչ գործածել:

Օղակների գլխաւորները ղեկավարում են օղակի զինւորներին նշաններով և հրամաններով:

115. Ամեն մի բաժանմունք կազմում է շոկատի շղթայի առանձին շրջանը և զրտնւում է բաժանմունքի պետի հսկողութեան տակ: Երբ շղթայի մէջ տարբեր բաժանմունքների զինւորների իրար խառնելը անխուսափելի է, օտար շրջանի մէջ ընկած մարդիկը մտնում են այդ շրջանի (բաժանմունքի, օղակի) գլխաւորի հրամանատարութեան տակ:

Առաջին հնարաւոր դէպքում պէտք է հրաման տրւի, որ զինւորները իրանց բաժանմունքներով և օղակներով զատուին:

### ՊԵՏԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇՂԹԱՅԻ ՄԷՋ:

116. Շ Ղ Թ ա յ ի մ է ջ ա մ ե ն մ ի պ ե տ ո ղ ա ր տ ա կ ա ն է՝



1) Գիտակցել գործողութիւններէ նպատակը և կատարելիք գերը՝ այն զօրամասի, որի անմիջական մասն է կազմում նրան յանձնւած շղթայի շրջանը և՛ իր բոլոր ուժերն և իշխանութիւնը գործադրել իր վրայ զբաժ մարտական խնդիրը լաւագոյն կերպով լուծելու համար:

2) Ծառայել՝ իբրև ճշտակատարութեան, անվեհերութեան և տոկունութեան օրինակ իր ստորադրեալների համար:

3) Հոգալ, որ բոլոր ստորադրեալները գործողութ. նպատակը և պայմանները հասկանան, գրդելով նրանց ինքնագործունէութեան և հնարագիտութեան, նոյն ժամանակ պահանջել նրանցից ճշգրիտ կատարողութիւն և խոհուն պահպանութիւն սահմանւած կանոնների և պարտականութիւնների:

4) Հսկել, որ ստորադրեալներից ոչ ոք առանց հրամանի կամ թոյլտուութեան զօրակազմը չթողնի:

5) Կազմակերպել իր շրջանի սահմաններում թշնամու գործողութիւնների անընդ-

հատ հսկողութիւն և՛ առջևի, թեւերի և թիկունքի վայրի դիտողութիւն:

6) Միշտ հետևել, որ զինւորները բաւականաչափ փամփուշտ ունենան և՛ լրացնել նրա պաշարը:

7) Եթէ իր կամ հարեան շրջանի շղթայի մէջ գնդացիներ կամ թնդանօթ յառաջանան, պարտական է, առանց հրամանի սպասելու, միջոցներ ձեռք առնել՝ նրանց թըշնամու անսպասելի գրաւումից ապահովելու համար:

8) Պարտական է միջոցներ ձեռք առնել՝ իր անմիջական գլխաւորի հետ արագ հաղորդակցութիւն հաստատելու և նոյնպէս՝ հարեան զօրքերի հետ կապ և համագործակցութիւն ստեղծելու համար:

9) Պարտական է որոշել իր փոխանորդները՝ այն դէպքի համար, եթէ ինքը սպանւի կամ վիրաւորւի և հսկել, որ իրան ստորադրեալ պետերը նման փոխանորդներ ունենան, որոնք հարկ եղած դէպքում անմիջապէս նրանց տեղը անցնեն:



10) Երբ ժամանակ կամ հնարաւորութիւն չկայ աւագ գլխաւորի ցուցմունքներին սպասելու, պարտական է՝ գործելուն քննութիւն կերպով, հոգս քաշելով ամենից առաջ ընդհանուր նպատակին հասնելու և թշնամուն մեծագոյն կորուստ պատճառելու մասին:

117. Զոկատի պետը պարտական է՝

1) Շղթայ կապած շոկատի (շոկատի շըրջանի)՝ կրակը, շարժումներն և գործողութիւնները ղեկավարել, աչքի առաջ ունենալով՝ շոկատի վրայ դրած նպատակը և վաշտապետի ցուցմունքները:

Մարտի դաշտին և իր պետի նշաններին հսկելու համար, և նոյնպէս՝ հրամաններն, զեկուցումները հաղորդելու և այլ յանձնարարութիւնները կատարելու համար, շոկատի պետը կարող է մէկ-երկու զինուոր շոկատից իր մօտ դուրս կանչել:

2) Մի որևէ տեղում տեղաւորւելու (զետեղւելու) ժամանակ, նա պէտք է հոգս քաշի, որ շոկատը լաւագոյն կերպով մի-

ջալայրին յարմարի, և երբ հարկաւոր է՝ տեղի արւեստական ամրացման մասին մտածի:

3) Կրակելու ժամանակ նա պէտք է մատնացոյց անի նշանները, որոշի նշանացոյցի (պրիցելի) բարձրութիւնը, նշան առնելու կէտը (точка прицѣливанья) և կրակի, տեսակը իսկ շոկատի համադարկերի ժամանակ՝ կօմանդ անի: Երբ հարկաւոր համարի, պէտք է կրակի անմիջական դեկավարութիւնը տայ բաժանմունքների պետերի, օղակների գլխաւորների և նոյն իսկ շարքի զինուորների ձեռքը. երբ որ, պայմաններին նայած, հարկաւոր լինի՝ պէտք է կրակը դադարեցնի:

4) Տեղափոխութիւնները ժամանակ՝ պէտք է շոկատին կրակի դիրքերը (стрѣлковыя позиціи) ցոյց տայ, ուղղութիւն և ուղղութիւն առող բաժանմունքները նշանակի, երբ շոկատը ամբողջը միասին է տեղափոխում, նրան ան ձաւբ տանի, իսկ երբ տեղափոխում է բաժանմունքներով,



օղակներով կամ առանձին մարդկանցով, նրանց հերթը և վազքի (перебѣжка) կարգը զեկավարի:

5) Գրոհել կամ սեփնամարտի ժամանակ, նա պէտք է ցոյց տայ զինւորներին զարկի ուղղութիւնն և նպատակը, անձամբ տանի իր շոկատը և առաջինը ուռա հարձակւի:

118. Բ ա ժ ա ն մ ու ն ք ի պ ե տը պ ա ռ տ ա կ ա ն է՝

1) Հետեւել որ իր շրջանի զինւորները ճիշտ կատարեն շոկատի պետի կօմանդոները, հրամանները և պայմանական նշանները, և երբ հարկաւոր է՝ կրկնել նրանց:

2) Հետեւել, որ զինւորները կանոնաւոր յարմարւեն վայրին և հսկել կրակին:

3) Երբ շոկատի պետը իրան է յանձնել՝ նա պարտական է բաժանմունքի համազարկերի կօմանդանել և սակաւ կրակի հերթը պահել:

4) Բաժանմունքներով, օղակներով կամ մէկ-մէկ տեղափոխութիւնների ժամանակ և զրոհի միջոցին, պարտական է անձամբ

տանել իր բաժանմունքը, աչքի առաջ ունենալով շոկատի պետի ցուցմունքները և պարագաները. երբ կարիք կայ, պէտք է նշանակի ուղղութիւն սուղ օղակը:

119. Օղակի գլխաւորը պէտք է հետևի, որ շոկատի և բաժանմունքի պետերի բոլոր կարգադրութիւնները ճշգրիտ կատարւեն, որ նշանացոյցները (прицѣлы) ճիշտ սարքւած լինեն, որ զինւորները լաւ նշան առնեն և տեղին ճարպիկօրէն յարմարւեն, — պարտական է իր օղակի մարդկանց շարժումներին և գործողութիւններին հսկել և նրանց համար ամեն բանի մէջ իբրեւ օրինակ ծառայել: Օղակի մէջ սակաւ կրակի հերթը պահել: Օղակներով կամ մէկ-մէկ վազքի (պերեբէժկա) միջոցին, նա պէտք է անձամբ տանի իր օղակը:

Օղակի գլխաւորը պիտի միշտ տեղեակ լինի, թէ՛ իր օղակի իւրաքանչիւն զինւոր ուր է գտնոււմ, ինչ է անում, և որքան փամփուշտ ունի:



## ԶՈՒՍՏԻ ՇՂԹԱՅ ԿԱՊԵԼԸ

120. Զոկատը կարող է շղթայ կապել ամեն զօրակազմից և ցանկացած ուղղութեամբ, տեղի վրայ կամ առաջ շարժելու միջոցին, քայլելով կամ վազելով:

121. Զոկատի շղթան կապելու համար՝ տեղի վրայ՝ ճակատի գծով, կամ շարժման միջոցին ցոյց աւած գիրքի վրայ կանգ առնելով, շոկատի պետք է պէտք է զինւորներին յայտարարի գործողութեան նպատակը, ուղղութիւն պահելու համար մատնանշի նրանց՝ որեւէ աչքի ընկնող առարկայ, և ցոյց տայ այն զիծը կամ դիրքը, որը շղթան պիտի բռնի, որոշի մարդկանց միջի հեռաւորութիւնը և յետոյ կօմանդ տայ՝ շոկատ՝ գծով (կամ այս ինչ գիրքի վրայ) միջից (դէպի աջ կամ դէպի ձախ) ՇՂԹԱՅ (աւելացնելով եթէ հարկաւոր է—ՎԱԶԲ):

Այս կօմանդից յետոյ մէջտեղի (աջ թևի, կամ ձախ թևի) մարդը պէտք է իսկոյն,

դառնայ ցոյց աւած առարկայի ուղղութեամբ, կանգ առնի (եթէ շոկատը շարժուած է), կամ քայլի (վազի) մինչև մատնանշած դիրքը (գրքը) և տեղին յարմարւի: Մնացած մարդիկը արագ քայլելով (վազելով) պէտք է տարածեն ճակատի նոր գծով, քայլելիս մէկը մէկից հրահանգւած հեռաւորութեամբ մի շարք շարեն, տեղին յարմարւին (յօդ. 78, կէտ 5) և իսկոյն հրացանները լցնեն:

122. Դէպի առաջ շարժումը շարունակելով շղթայ կապելը կատարուում է նախորդ յօդւածի համաձայն, բայց կօմանդ՝ գծով (կամ այս ինչ գիրքի վրայ) չի արւում: Զոկատի պետք է պէտք է նշանակի ուղղութիւն տուող բաժանմունքը, որը շղթայ կապելով, շարժուում է հրահանգած ուղղութեամբ, իսկ մնացածները շղթայ են տարածում նրանից՝ կիսադարձ շարժելով (կէսաջ կամ կէսձախ):

Շղթայ կապելը վերջացնելուց յետոյ, շոկատը շարունակուում է շարժումը, կամ



եթէ լինի՝ ԿԱՆԳՆԻՐ կօմանդ՝ կանդ է  
առնում և զինւորները խալոյն յարմարւում  
են տեղին և լցնում են հրացաններու:

### ՇՂԹԱՅԻ ԿՐԱԿԸ:

123. Շղթայի կրակը կարող է լինել՝  
հատ-հատ (սակաւ, յաճախ և փամփուշտ-  
ների որոշած թւով) և համազարկերով:

124. Հատ-հատ (մէկ մէկ) կրակ բա-  
նալու համար ջոկատի պետը պէտք է ցոյց  
տայ՝ 1) Կրակի առնելիք նշանը և 2)  
նշանացոյցի (պրիցէլի) բարձրութիւնը,  
և յետոյ կօմանդ տայ՝

ա) Սակաւ կրակի համար բաժան-  
մունքներում (օղակներում) սա-  
կաւ-ԿՐԱԿ:

Բաժանմունքների պետերը պէտք է  
կրկնին, եթէ հարկաւոր է, ջոկատի պետի  
ցուցմունքները և որոշեն կրակելու հերթը.  
որի համար նրանք կօմանդ են անում՝ ա-  
շից (ձախից) մէկ մէկ- ԿՐԱԿ! Կամ

օղակներով մէկ մէկ ԿՐԱԿ (յօդ. 72)  
բ) Յաճախ կրակի համար կօմանդ է  
տրւում՝ յաճախ-ԿՐԱԿ:

գ) Փամփուշտների որոշած թւ-  
ւով կրակի համար՝ (օրինակ՝) Հինգական  
փամփուշտ—ԿՐԱԿ:

բ. և գ. կետերում յիշած կօմանդներով  
պէտք է կրակել առանց հերթի:

125. Հատ-հատ (մէկ-մէկ) կրակը դա-  
դարեցնելու համար ջոկատի պետը պէտք  
է սուլի, բաժանմունքների պետերը պիտի  
սուլոցը կրկնեն. կամ՝ պէտք է հրաման  
տայ, որը զինւորները շղթայի գծով իրար  
պէտք է հաղորդեն. դրանից յետոյ, եթէ  
հարկաւոր է՝ կօմանդ է անում ԴԱԴԱՐ.  
Կամ հան-ՓԱՄՓՈՒՇՏԸ: Փամփուշտների ո-  
րոշած թւով կրակելու ժամանակ, զինւոր-  
ները, սպառելով այդ թիւը, պէտք է իրանք  
կրակը դադարեցնեն:

126. Համազարկերը կատարւում են  
ջոկատով կամ բաժանմունքներով,  
առանձին վարժութեան մէջ (յօդ. 36 և 37)



ցոյց տուած կօմանդներով, սակայն՝ առանց զինւորներէ ղեկըը որոշելու:

### ՇՂԹԱՅԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ:

127. Իր բոլոր շարժումներէ ժամանակ շղթան պէտք է՝ աւելալ ուղղութիւնը պահի, զինւորները պէտք է՝ իրար մէջ կապ պահպանեն եւ առանց ցուցմունքներէ սպասելու, իրանք տեղին յարմարեն:

128. Շղթան կարող է քայլով կամ վազքով շարժել. վերջին դէպքում — ամբողջ շոկատով, բաժանմունքներով, օղակներով կամ մէկ մէկ մարդկանցով: Բացի այդ թշնամու ուժեղ կրակի տակ շրջթայի զինւորները կարող են որոշ տեղերը շրջելով կամ այդ տեղերի վրայ սողալով՝ անցնել: Շարժելու ձեւը որոշում է շոկատի պետը:

Զինւորները տանում են իրանց հրացանները ինչպէս ամեն մէկին յարմար է. երբ հրացանները լցած են, բլթակները (կուրօկ-

ները) պէտք է նախազգուշական լարի վրայ (պրէդօխրանիտելնիյ վզօղ) դրած լինեն:

129. Շղթան քայլով շարժեցնելու համար շոկատի պետը, կրակը դադարեցնելուց յետոյ, ցոյց է տալիս շարժման նպատակը, տեղափոխելու տեղը և յետոյ կօմանդ է անում:

2) Այս ինչ բաժանմունքով, այս ինչ առարկայի վրայ (կամ ինչ հետ),

3) Զոկատ — ՅԱՌԱՁ!

Վերջին կօմանդից յետոյ զինւորները իսկոյն վեր են կենում և գնում են ցոյց տուած ուղղութեամբ, իսկ ուղղութիւն տուող բաժանմունքի պետը քայլելով կօմանդ է անում. Այս ինչ առարկայի վրայ (կամ շոկատի պետի հետ ից), այս ինչ օղակով — Մնացած բաժանմունքների պետերը, երբ հարկաւոր է, կրկնում են շոկատի պետի կօմանդը:

Զոկատը կանգնացնելու համար շոկատի պետը կօմանդ է անում՝ Շոկատ — ԿԱՆԳՆԻՐ!



կանգնելուց յետոյ զենւորները իրանք պէտք է տեղին յարմարւեն (յօդ. 78, կ. 5)

130. Վ ա զ ք ր (պ է ր է բ է ժ կ ա) ա մ-բ ո ղ ջ ջ ո կ ա տ ո վ կատրուում է քայլով շարժելու համար որոշած կօմանդներով և կանոններով, բայց՝ ՅԱՌԱՋ կօմանդից յետոյ ջոկատի պետը աւելացնում է՝ ՎԱԶԲ:

131. Բ ա ժ ա ն մ ու ն ք ն ե ր ո վ վազքի համար ջոկատի պետը նշանակում է ամեն մի բաժանմունքի պետին վազելու տեղը և վազքի հերթը:

Հերթապահ բաժանմունքների պետերը, զինւորներին ջոկատի պետի հրամանը հաղորդելով, դադարեցնում են կրակը իրանց շրջաններում և կօմանդ են անում:

Ա յ ս ի ն չ օ ղ ա կ ո վ. ա յ ս ի ն չ առարկայի վրայ (ինձ հետ) — ՅԱՌԱՋ, ՎԱԶԲ:

Եթէ ջոկատի պետից նշանակած վերջնական կէտին չի կարելի մի անգամից վազելով հասնել, բաժանմունքների պետերը կարող են կարճատև հանգստի համար ա-

մենայ յարմար տեղերում, այնքան անգամ, որքան հարկաւոր լինի, իրանց զինւորներին կանգնացնել:

Այն բաժանմունքները, որոնք մնում են իրանց տեղում, եթէ հարկաւոր է և հնարաւոր է նեցուկ պէտք է լինեն վազող բաժիններին իրանց յաճախակի կրակով. իսկ երբ վազող մասերը տեղաւորւեն նոր դիրքի վրայ և կրակ բանան կամ պայմանական նշան տան, մնացած բաժանմունքները շարունակում են վազքը:

132. Վ ա զ ք օ ղ ա կ ն ե ր ո վ և մ է կ մ է կ, նոյնպէս և ս ո ղ ա լ ո վ տ ե ղ ա փ ու խ ու թ իւ ն ը կատարւում է վերոյիշեալի համաձայն: Հերթապահ բաժանմունքների պետերը պէտք է օղակներին հերթ նշանակեն և անձամբ տանեն առաջին օղակները (առաջին մարդկանց)՝ ջոկատի պետի ցոյց տաւով տեղը: Ընտրելով այնտեղ բաժանմունքի համար յարմար դիրք, նրանք պէտք է տան մնացած օղակներին շարժելու նշան: Օղակների գլխաւորները պէտք



է իրանց մարդկանց հետ ձգտեն արագ վազելով (սողալով) առաջ անցածներին հասնել:

133. Շղթայի ետ խաղացումը կատարւում է նոյն ձևերով, ինչպէս և առաջ շարժումը, բայց՝ միշտ քայլով. և՛ ՅԱՌԱՋ, կօմանդի փոխարէն տրւում կօմանդ—ՅԵՏ:

Տեղափոխութիւնից առաջ ջոկատի պետը պէտք է ցոյց տայ այն դիրքը կամ գիծը, ուր պիտի նահանջի շղթան:

134. Շղթայի տեղափոխութիւնները կողմնակի և թևի ուղղութեամբ կատարւում են վերոյիշեալի համաձայն:

### ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ:

135. Զոկատի ուղղութեան փոփոխութիւնը՝ ամբողջ շղթայով միաժամանակ, տեղի վրայ և շարժման մէջ, կատարւում է յօդ. 31-ի կէտ բ-ի համաձայն (ճակատը՝ ցոյց տւած առարկայի վրայ դար-

ձնելով) և՛ շղթայի շարժումների կանոններով:

136. Բ ա ժ ա ն մ ու ն ք ն եր ո վ, օ դ ա կ ն եր ո վ և մ է կ մ է կ վազքով ուղղութիւնը՝ տեղի վրայ փոխելու համար՝ ջոկատի պետը բաժանմունքներից մէկին հրաման է տալիս նոր ուղղութեամբ տեղաւորւելու և յետոյ համապատասխան հրամաններ միւս մասերին:

Բաժանմունքները տեղափոխւում են նոր գծի վրայ իրանց պետերի կօմանդներով (հրամաններով, նշաններով):

### ԳՐՈՀ ԵՒ ՍԻՒՆԱՄԱՐՏ:

137. Զոկատը՝ թշնամուն շղթայով մօտ 50 քայլ մերձանալով, կարող է միանգամից հարձակւել նրա վրայ տեղից սկիներով:

Երբ անկարելի է, տեղի յարմարութիւնները օգտագործելով, այդքան մօտ մերձանալ (վազքով, սողալով) թշնամուն, շղթան՝ վերջին կրակի դիրքից կարող է բաց-



արձակ կերպով գրոհի (ատակայի) գնալ, մինչև այն տարածութիւնը (մօտ 50 քայլ), երբ կարելի է զարկել սւինի:

Ծանօթ. Արհեստական կերպով ամբողջացրած դիրքի վրայ գրոհը—կոչւում է շտոկմ:

138. Ինչպէս գրոհի, այնպէս էլ տեղից սւինազարկի համար, ջոկատի պետը պէտք է յայտարարի զինւորներին գործողութիւնների նպատակը և շարժման ուղղութիւնը:

139. Տեղից սւինազարկը պէտք է կատարւի ջոկատի պետի՝ ՈՒՌԱ—կօմանդով: Այս կօմանդից յետոյ զինւորները պէտք է արագ վեր թռչեն և միանգամից, ուռա աղաղակելով, հարձակւեց թշնամու վրայ, վազելիս՝ դէպի մօտակայ պետերը խտանալով:

140. Գրոհի համար ջոկատի պետը կօմանդ է անում՝ ի գրոհ—ՅԱՌԱՋ:

Բաժանմունքների պետերը և օղակների գլխավորները պէտք է կրկնեն այս կօմանդը: Ամենքը արագ պէտք է ոտքի կանգ-

նեն և գնան, առաջիններին հետևելով և շարունակելով քայլելիս թշնամուն գնդակահարել:

Երբ շղթան թշնամուն մինչև 50 քայլ մօտենայ, ջոկատի պետը կօմանդ է անում՝ ՈՒՌԱ, և առաջ է վազում: Զինւորները՝ կրակելը դադարեցնելով, արագընթաց, ուռա աղաղակելով, նետոււմ են թշնամու վրայ սւինամարտի, վազելիս՝ դէպի մօտակայ պետերը խտանալով:

141. Երբ գրոհի շարժումը առանց կրակի պէտք է կատարւի, ջոկատի պետը հախազգո շայնում է այդ մասին զինւորներին՝ ի գրոհ—ՅԱՌԱՋ կօմանդից առաջ, տալիս ի՝ ԴԱԴԱՐ կօմանդը, իսկ ինքը գրնում է ջոկատի առջից: Բաժանմունքների պետերը, կօմանդներն կրկնելով, նոյնպէս դուրս են գալիս առաջ. զինւորները գնում են արագացրած քայլերով, հրացանները կողքին պահած: Զոդատի պետի՝ ՈՒՌԱ—կօմանդով՝ ամենքը միահամուր նետոււմ են թշնամու վրայ սւինամարտի:



142. Թշնամուն վար գցելուց յետոյ, ջուկատի պետը կանգնեցնում է ջոկատը, հաւաքում է զինւորներին և կարգի բերում, կրակ է բանում նահանջող թշնամու կամ նրան օգնութեան հասնող օժանդակ զօրամասերի վրայ, հրամայում է խրամատ փորել կամ միւս անհրաժեշտ կարգադրութիւններն է անում:

### ՇՂԹԱՅԻ ՀԱԽԱՔԸ

143. Շղթան հաւաքելու համար ջոկատի պետը, դադարացնելով կրակը (եթէ կրակում էին) կօմանդ է անում՝ ՀԱԽԱՔ, կամ՝ ԻՆՁ ՄՕՏ, երեսը ուղած ուղղութեամբ դարձնելով:

Այս կօմանդից յետոյ զինւորները պէտք է վազելով ջոկատի պետի ետևից՝ երկշարք բաց զօրակազմի մէջ խտանան:

### ՎԱՇՏԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

#### ԽԻՏ ԶՕՐԱԿԱԶՄ

#### ՎԱՇՏԻ ՀԱՇԻԻԸ:

144. Վաշտի մէջ ջոկատները կանգնում են կողք կողքի և եթէ առանձին հրաման չի եղել, աջից ձախ, իրենց համարների կարգով:

Երբ վաշտը չորս ջոկատից է բաղկացած, 1-ն և 2-րդ ջոկատներն կազմում են առաջին կիսավաշտը, իսկ 3-րդ և 4-րդը — երկրորդ կիսավաշտը:

Ծանօթ. — Խաղաղ ժամանակ ջոկատների կարգերի թիւը կարելի է, հարկաւոր գէպքում, հաւասարեցնել. եթէ վաշտը 32-ից պակաս կարգեր ունի, նա պէտք է 3 կամ 2 ջոկատի բաժանւի, կամ



իբրեւ մի ջոկատ համարւի, միայն թէ ամեն մի ջոկատում 8 կարգից պակաս չը պէտք է լինի:

145. Ամեն մի ջոկատի հաշիւը լինում է՝ ջոկատի վարժութեան, յօդ. 79 – 81-ի համաձայն. բաժանմունքները պահպանում են իրանց համարները ջոկատների մէջ, իսկ օղակները՝ բաժանմունքների մէջ:

146. Կրտսեր սպաները հրամանատար են նշանակւում այն ջոկատների, որոնք նաև զօրակազմից դուրս իրանց են յանձնւած:

147. Աւագ զինւորը (Ֆէլդֆէրել) պէտք է հսկի վաշտի շարքերի մէջ գտնւող բոլոր զինւորներին:

148. Վաշտի նշանը կրող զինւորը (լինէյ-նիյ)՝ բացի ազդանշաններ տալուց (եթէ սուսնաւոր է) ծառայում է՝ վաշտապետի գլխաւոր վայրը և հաւաքի տեղը ցոյց տալու համար: Այդ համար նա կըրում է իւր սւինի վրայ վաշտի նշանը:

Վաշտի հաւաքի տեղը որոշելու համար, նա պէտք է կանգնի այնտեղ, ուր վաշտի

կենտրոնը պիտի գտնւի, երեսը՝ դէպի ճակատի կողմը դարձրած: Այդ միջոցին նա պէտք է հրացանը՝ ուղղահայեաց կրծքի դիմացը, փողը դէպի դուրս, — բռնի, ձախ ձեռքը՝ կոթի (պրիկլադի) ներքեւ, իսկ աջ ձեռքով՝ փողափայտի վզից (шейка ложи) պահած:

Ծանօթ.— Շարքի մէջ եղած ժամանակ վաշտի նշանը կրող զինւորը, սւինի վրայ նշանը հագին, ձեռքի առ կօմանդը չպէտք է կատարի:

### ՎԱՇՏԻ ԶՕՐԱԿԱԶՄԵՐԸ

149. Վաշտը գործ է ածում հետեւեալ զօրակազմերը՝ 1) բաց, 2) զօրասիւն եր, 3) ջոկատներով և բացի այդ՝ մարտական զօրակարգ:

150. Բաց զօրակազմի մէջ (խիտ և նոսր) ջոկատները կանգնում են մի գծով առանց իրար մէջ առանքներ (հեռաւորութիւններ — ինտերւալներ) ունենալու:



156. Վաշար կարող է կազմել՝ ջ ո կ ա տ-  
ն եր ի և բ ա ժ ա ն մ ու ը ն եր ի գ ո-  
ր ա ս ի լ ն եր :

157. Ջ ո կ ա տ ն եր ի գ ո ռ ա ս ի լ ն ի  
մ է ջ ջ ո կ ա տ ն եր ի մ ի ջ և հ ե ո աւ ո ռ ու թ իւ լ ն ն եր ը  
պ է տ ք է լ ի ն ն 5 ք ա յլ :

(Բ ա ժ ա ն մ ու ը ն եր ի գ ո ռ ա ս ի լ ն ի  
մ է ջ ջ ո կ ա տ ի վ ա ը ժ ու թ ե ա ն յ ո ղ . 96-ի հ ա-  
մ ա ձ ա յ ն , ա մ ն ն մ ի բ ա ժ ա ն մ ու ը ն ք պ է տ ք է  
կ ա ն գ ն ի մ իւ ս ի ե տ ե ի ց՝ իւր երկարութեան  
հաւասար հեռաւորութեամբ :

161. Ջ ո կ ա տ ն եր ո վ գ ո ռ ա կ ա զ մ ի  
մ է ջ վ ա շ տ ի ջ ո կ ա տ ն եր ը դ ա ս աւ ո ռ ու լ ու մ ե ն  
մ է կ կ ա մ երկու գ ծ ո վ , կ ա մ ա ս տ ի ճ ա ն ն եր ո վ ,  
իւրաք մ է ջ վ ա շ տ ա պ ե տ ի ց ս ա հ մ ա ն լ ա ծ տ ա-  
ր ա ժ ու թ իւ լ ն ն եր ն և հ ե ո աւ ո ռ ու թ իւ լ ն ն եր ը պ ա-  
հ ե լ ո վ :

Ա մ ն ն մ ի ջ ո կ ա տ , իր պ ա յ մ ա ն ն եր ի ն ն ա յ-  
ա ծ , իր պ ե տ ի կ ա ը դ ա ղ ը ու թ ե ա մ բ , կ ա ը ո ղ  
է՝ բ ա ց գ ո ռ ա կ ա զ մ ու ն ն ա լ ( խ ի տ կ ա մ  
ն ուր , մ է կ շ ա ը ք կ ա մ երկշաք ), գ ո ռ ա ս ի լ ն

(բաժանմունքներով) կազմել կամ կարգերով  
կազմել :

186. Վաշար կարող է ամեն ուրիշ գ ո-  
ր ա կ ա զ մ ի ց , թ է տ ե ղ ի վ ը ա յ և թ է շ ա ը ժ մ ա ն  
մ է ջ , ջ ո կ ա տ ն եր ո վ գ ո ռ ա կ ա զ մ ի ա ն ց ն ել :  
(Տ ե ա կ ո մ ա ն ղ ն եր , յ ո ղ . 187, 188) :

Կ Ր Ա Կ

190. Վաշտի բաց գորակազմից կարելի է  
կրակել. 1) խիտ կազմից—միայն համա-  
զարկերով, ամբողջ վաշտով, կանգնած  
կամ չոքած 2) նոսր կազմից թէ հա-  
մազարկերով, ամբողջ վաշտով կամ ջո-  
կատներով, և թէ հատ հատ—պառկած,  
չոքած կամ կանգնած :

191. Կրակը ամբողջ վաշտով, թէ  
համազարկերով և թէ հատ-հատ պէտք է  
սկսել և դադարեցնել՝ ջոկատի համար (յ ո ղ .  
110) ցոյց տաւծի համապատասխան :

192. Նոսր գորակազմից ջոկատներով  
կրակ բանալու համար, վաշտապետը՝ նը-



շանր (բոլոր ջոկատների համար ընդհանուր կամ տարբեր նշաններ) և կրակի տեսակը ցոյց տալուց յետոյ, կօմսնդ է անում:

Ջոկատներով—ԿՐԱԿ:

Այս կօմանդից յետոյ ջոկատները կրակ են բանում՝ ջոկատի վարժութեան կանոնների համաձայն (յօդ. 109 և 110):

Ջոկատների կրակը դադարեցնելու համար վաշտապետը հրաման է տալիս (կամ սուլում է), ջոկատների պետերը կօմարդ են անում իրանց ջոկատներին՝ ԴԱՅԱՐ, և սպասում են հետագայ ցուցմունքներին:

193. Ջոկատներով զօրակազմի մէջ կրակ են անում նախորդ յօդաձևով յիշած կանոններով:

Երբ վաշտը զօրասիւն է կազմում, ամբողջ վաշտով կամ վաշտի մասերով կրակ բանալու համար պէտք է կամ՝ վաշտը բաց անել, կամ՝ ուրիշ համապատասխան հրամաններ տալ:

## ՎԱՇՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԶՕՐԱԿԱՐԳԸ

### ՄԱՐՏԱԿԱՆ ԶՕՐԱԿԱՐԳԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

194. Վաշտի մարտական զօրակարգը կազմում է՝ շղթայ կապած և՛ պահեստում (ռէզէրվ) մնացած ջոկատներից:

Շղթայի մէջ կարող են լինել նաև բոլոր ջոկատները:

Վաշտի մարտական կարգի համար նշանակած տեղը կոչում է՝ վաշտի մարտական շրջան (ռւչատուսի):

195. Շղթայի մէջ գտնուող ջոկատները կազմում են շղթայի՝ ջոկատների շարժանները (вводные участки) և դասաւորում են՝ ջոկատի վարժութեան մէջ յօդ. 111—113 ցոյց աւած կանոնների համաձայն, ճակատի գծով, իրար հետ կապակցած:

196. Պահեստի տեղն է շղթայի ետևից կամ կողքից (աստիճանով ետ քաշւած՝ այնպիսի հեռաւորութեամբ, որ նա մէկ կող-



մից՝ միշտ ժամանակին շղթային օգնութիւն տալու հնարաւորութիւն ունենայ, և միւս կողմից՝ իզուր կորուստ չկրի թշնամու կրակից և՛ աննկատելի լինի նրա համար:

Պահեստի զօրակագմը լինում է՝ խիտ՝ նօսր կամ՝ ջոկատներով:

Եթէ պահեստում տեղաւորած լինեն մի քանի ջոկատ միասին, նրա հրամանատարութիւնը յանձն է առնում ջօկատների հրամանատարներից աւագագոյնը:

Ծանօթ.—1. Վաշտին կցւած գնդացիները, իրանց գործադրելու ժամանակն և տեղը որոշելուց առաջ, գտնւում են վաշտի պահեստի մէջ կամ՝ որտեղ որ հրահանգւած լինի, և յառաջանում են 2ԸԴ-թայի մէջ կրակելու համար՝ վաշտապետի հրամանով:

Կուի ժամանակ, թշնամու ներգործող կրակ տարածութիւնների վրայ գնդացիները պէտք է լաւ պատասպարւած լինեն թշնամու հայեացքներից և կրակից. նրանց տեղափոխութիւնը այդ տեսակ պայմանե-

րում պէտք է կատարւի առանց ձիերի:

Ծանօթ.—2. Վաշտին կցած փամփուշտի կառքերը հարկաւոր է պահեստին մօտիկ պահել, բայց երբ կոիւր սկսւի, վաշտապետը պէտք է որքան կարելի է շղթային մօտիկ քաշի նրանց:

197. Եթէ մարտական զօրակարգի թեւերն և թիկունքը՝ հարևան զօրքերի դասաւորութեամբ չեն ապահովւած, նրանք պէտք է հսկողութեան առնեն՝ վաշտապետի կարգադրութեամբ շղթայից և պահեստից դուրս ուղարկւած հսկողների (զօգօրների) միջոցով:

Եթէ հսկողների մասին կարգադրութիւն չի եղած, թիկունքի ջոկատների պետերը և պահեստի գլխաւորը պէտք է իրանք դուրս ուղարկեն նրանց:

198. Վաշտի մարտական զօրակարգը պէտք է կապ պահպանի՝ աջից և ձախից գործող և թիկունքում գտնուող զօրամասերի հետ՝ պահակատեղիների, հսկողների և



այլ միջոցների օգնութեամբ (հեռախօս, նըշաններ և այլն)։

199. Վաշտի մարտական զորակարգի ճակատի տարածութիւնը, եթէ նա որոշած չէր հրամանով, պէտք է համապատասխանի՝ վաշտին յանձնարարած նպատակին (մարտական խնդրին), տեղի բնոյթին և մարդկանց քանակին։

Միջին տարածութիւնը՝ պատերազմական կազմ ունեցող վաշտի համար (առանց հրակոշներէ) կարելի է համարել 250—300 քայլ։

200. Վաշտապետը պէտք է գտնւի մարտական զորակարգի մէջ ափսոսելի՝ որտեղից որ նա ամենայարմար կերպով կարող է ամբողջ վաշտը ղեկավարել և թշնամուն դիտել, իսկ երբ շղթայի մէջ գտնուում է երկու և աւելի շուկատ—անմիջապէս նրանց ղեկավարել։

Վաշտի կողքին նրա հրամանները և գեկուցումները տանելու և կուրի դաշտը դիտելու համար գտնուում են՝ վաշտի նշանը

կրող զինուորները, վաշտի փողահարը և պահեստապետը (կապտենարմուս), և բացի այդ, եթէ հարկաւոր լինի, մարդկանց անհրաժեշտ թիւը շուկատներից։

Պահեստի (ռէզերվի) գիտութիւնը պէտք է գտնւի ափսոսելի, որ, եղից որ նա ամենայարմար կերպով կարող է պահետը կառավարել, վաշտապետի հետ կապ պահպանել և շղթայի, իսկ եթէ, նարաւոր է՝ նաև թշնամու գործողութիւններին հետևել։

Ջոկատների և բաժանմունքների պետերի տեղերը ցոյց են տւած յօդ. 113-ում։

Աւագ զինուորը (ֆէլդֆէբել), եթէ ուրիշ հրաման չի ստացել, պէտք է գտնւի պահեստում և հսկի վաշտի թիկունքի կարգապահութեանը, փամփուշտի մատակարարութեանը և վիրաւորների դուրս տանելուն։

Թմբկահարները (փողահարները) զբաղւում են պահեստում կամ վաշտապետի մօտ՝ նրա հրամանին նայած։



## ՄԱՐՏԱԿԱՆ ԶՕՐԱԿԱՐԳԻ ՂԵԿԱՎԱՐՈՒ- ԹԻՒՆԸ

201. Վաշտապետը ընդհանուր պարտա-  
կանութիւնների վերաբերմամբ պէտք է դե-  
կավարւի յօդ. 116-ով:

Նա դասաւորում է ջոկատները՝ շղթայի  
և պահեստի մէջ, նշանակում է ջոկատների  
շրջանների սահմանները (շղթայի մէջ) և  
դեկավարում է նրանց կրակը, շարժումներն  
և գործողութիւնները, ջոկատների պետե-  
րին որոշ ինքնուրոյնութիւն տալով (յօդ.  
107):

Վաշտապետը հետևում է շղթայի կրակի  
ազդեցութեանը և ուժեղացնում է շղթան  
պահեստից:

Շարժման միջոցին՝ վաշտապետը ցոյց է  
տալիս ուղղութիւնը կամ այն դիրքը, ուր  
ջոկատները պէտք է տեղափոխւեն, նշանա-  
կում է ուղղութիւն տուող ջոկատը և դե-  
կավարում է մարտական կարգի վայրին  
յարմարւելք:

Վաշտապետը կազմակերպում է իւր սահ-  
մաններում՝ ռազմադաշտի դիտողութիւն,  
բաց թևերի պահպանութիւն և՛ իւր անմի-  
ջական գլխաւորի և հարևան զօրքերի հետ  
կապ և հաղորդակցութիւն:

202. Պահեստի գլխաւորը, վաշտա-  
տապետի ընդհանուր ցուցմունքներով, ընտ-  
րում է պահեստի տեղը և զօրարակազմի ձևը,  
և տուած ցուցմունքների և շղթայի գործո-  
ղութիւնների համաձայն տեղաւորում է և  
տեղափոխում նրան (յօդ. 196): Շղթան  
ուժեղացնելու և օժանդակելու համար՝ պա-  
հեստից մասեր է ուղարկում միայն վաշ-  
պետի հրամանով, որի հետ պարտական  
է մշտական կապ պահպանել: Կազմակեր-  
պում է իւր թիկունքի և թևերի հսկողու-  
թիւն, եթէ դրանք պաշտպանւած չեն ար-  
դէն հարևան զօրամասերի կողմից կամ այդ  
նպատակի համար ուղարկած հսկողներէց  
(յօդ. 197):

Պահեստը կառավարելու համար պահեստի



գլխաւորը ղեկավարուում է խիա և նօսր  
գօրակազմերի կանոններով:

202. Զոկատի և բաժանմունք-  
ների պետերը և օղակների գլխ-  
աւորները շղթայի մէջ ղեկավարուում  
են շոկատի վարժութեան կանոններով (յօդ.  
116—119):

### ՎԱՇՏԻ ՄԱՐՏԱՍԸ ԶՕՐԱԿԱՐԳԻ ԱՆՅՆԵԼԸ:

204. Վաշտը կարող է ամեն գօրակազ-  
մից, նաև արշաւի գօրասիւններից մարտա-  
կան կարգի անցներ: Այս գործողութիւնը  
պէտք է կատարւի որքան կարելի է թշնա-  
մուց ծածուկ կերպով և՛ թշնամու կողմը  
ուղարկած հսկողների պահպանութեան  
տակ:

205. Տեղի վրայ կանգնած վաշ-  
տի՝ մարտական կարգի անցներու համար,  
վաշտապետը նախօրօք հետախուզութիւն  
պէտք է կատարի և թշնամուն հսկելու և  
թեւերի պահպանութեան և կապ ստեղծելու

միջոցներ ձեռք առնի: Յետոյ՝ վաշտի բո-  
լոր զինւորներին պէտք է յայտարարի՝.

1) Ինչ է յայտնի թշնամու եւ իր հարե-  
ւան զօրքերի մասին.—2) Ինչ տեսակ նպա-  
տակ է դրած վաշտի առջեւ եւ՝ ինչպէս է  
մտադրւած այդ նպատակին հասնել.—3)  
Մարտական գօրակարգի ընդհանուր ուղղու-  
թիւնը.—4) Զոկատների դասատրութիւնը շղ-  
թայի եւ պահետի մէջ, շրջանները կամ  
նրանց տեղատրութիւնը վայրերը. 5) Մօտա-  
կայ՝ փամփուշտի կառքերի եւ ըժշկական  
կայանի տեղերը:

Երկու կամ աւելի շոկատների շղթայ  
կապելու ժամանակ դրանցից մէկը նշա-  
նակուում է իբրեւ ուղղութիւն տուող:

Ծանօթ. 1. Երբ ժամանակ չի լի-  
նում, վաշտապետը պէտք է յայտնի  
զինւորներին առնւազն գործողութեան  
նպատակը և շոկատների դասաւորուումը.  
մնացած ցուցմունք-  
ները պէտք է տայ շոկատների պետերի  
միջոցով հենց որ հնար լինի:



Ծանոթ. 2. Եթէ վաշտի հետ զընդացիրներ կան, վաշտապետը պէտք է նրանց՝ գործելու կամ մնալու տեղը ցոյց տայ: Նրանց գործի գնելուց առաջ, նա պէտք է նրանց համար՝ որոշ խնդիր (նպատակ) մատնացոյց անի, և եթէ հարկաւոր է, նրանց պահպանելու համար պահակախումբ հանի:

206. Զոկատները պետերը՝ բաժանմունքների պետերի օգնութեամբ պէտք է ստուգեն՝ թէ զինւորները ճիշտ են հասկացել արդեօք վաշտապետի բացատրութիւնները (յօդ. 205), և յետոյ վաշտապետը կ'օմանդ է անում. Այս ինչ շոկատները (կամ վաշտ) — ՇՂԹԱՅԻ Մէջ (եթէ հարկաւոր է՝ ՎԱԶԲ):

Այս կ'օմանդից յետոյ շղթայի մէջ նշանակած շոկատները ցրւում են (քայլով կամ վազբով) իրանց պետերի կ'օմանդներով իրանց շրջանների մէջ և շղթայ են կապում՝ շոկատի վարժութեան (յօդ. 120-122) համաձայն, համակերպելով ուղղու-

թիւն տուող շոկատին, որին ցուցմունքներ է տալիս վաշտապետը:

Պահեստի (ռէզէրվի) գլխաւորը տանում է պահեստը նշանակած տեղը և յարմարեցնում է վայրին:

Այն զինւորները, որոնք յօդ. 200 համաձայն պէտք է գտնւեն վաշտապետի կողքին կամ պահեստի մէջ, նոյնպէս և՛ բռնակիրները և փամփուշտ բերողները, եթէ վաշտապետը նրանց դուրս է կանչել, պէտք է իսկոյն զնան, ուր նշանակած են:

Վաշտի մէջ գտնուող զնդացիրները և փամփուշտի կառքերը տեղ են բռնում վաշտապետի կարգադրութեամբ (կան. յօդ. 196-ի):

207. Վաշտի՝ մարտական գորակարգի անցնելը շարժման հետ միասին կամ քայլելու ժամանակ կատարւում է նախորդ յօդաձևերի կանոններով. բայց՝ առաջխաղացման միջոցին — պահեստի մէջ նշանակւած շոկատները, իսկ նահանջի ժամանակ — շղթայի մէջ նշանակւածները:



ըր՝—կանգ են տոնում և կատարում են զօրակազմի ձևի հարկաւոր փոփոխութիւնները (շղթայ են կոչւում)—տեղի վրայ (ճակատի գծով). իսկ մնացած մասերը շարունակում են շարժումը և շղթայ են կոչւում, կամ փոխում են զօրակազմի ձևը շարժման միջոցին:

Երբ շղթայի և սլահեստի մէջ կազմւում է սլահանջած տարածութիւնը, կանգ առած ջոկատները շարունակում են շարժումը:

#### Կ Ր Ա Կ Ը:

208. Շղթայի մէջ կրակում են ջոկատներով, ամեն մի ջոկատի մէջ՝ ջոկատի վարժութեան յօդ. 123—126 կանոնների և կօմանդների համաձայն:

Կրակ բանալու համար վաշտապետը համապատասխան հրամաններ է տալիս ջոկատների պետերին և մատնանիշ է անում կրակի նպատակը (բոլոր ջոկատներին համար միևնույնը, կամ տարբեր) և կրակի տեսակը:

Կրակը զադարեցնելու համար վաշտապետը սուլում է (ջոկատների և բաժանմունքների պետերը կրկնում են), կամ համապատասխան հրամաններ է տալիս:

209. Ջոկատների (բաժանմունքների) պետերը պարտական են, առանց մատնաւոր ցուցմունքների սպանելու, իրանք կրակը զադարեցնել, եթէ նշանը թագնել է կամ այլևս չի երևում նրանց զինւորներին, կամ՝ եթէ կրակը դառնում է անկանոն: Եւ ընդհակառակն, իրանց նախաձեռնութեամբ պէտք է փոփոխեն նշանները և կրակ բանան, երբ յապաղել չի կարելի (եթէ այդ մասին արգելք չի եղել վաշտապետից):

210. Պահեստը (ոէզէրվ) կրակ է բանում միայն վաշտապետի հրամանով, բացի այն դէպքերից, երբ լանսկընկալ վրտանդ սպառնայ թշնամուց:

#### ՄԱՐՏԱԿԱՆ ԶՕՐԱԿԱՐԳԻ ՇԱՐժՈՒՄՆԵՐԸ:

211. Մարտական զօրակարգի շարժում-



ները կատարուում են վաշտապետի հրամաններով, որոնք պէտք է որոշեն՝ շարժման ընդհանուր նպատակը և ամեն մի ջոկատի (նաև՝ զնդացիւրների, եթէ կան) մասնաւոր խնդիրները:

212. Շղթայի մէջ գտնւող ջոկատները շարժուում են ջոկատի վարժութեան կանոններով (յօդ. 127—134), բայց՝ պէտք է կապ և փոխադարձ օժանդակութիւն ունենան իրար մէջ, նաև՝ վաշտապետի և հարևան զօրքերի հետ:

213. Պահեստը, եթէ մասնաւոր հրաման չստանայ, պէտք է՝ իր շարժումները իր պետի կարգադրութեամբ շղթայի շարժումների հետ համաձայնեցնի (յօդ. 196 և 207)

Պահեստը կարող է մէկ պատասպարանից միւսը շարժել՝ քայլով, վազքով կամ սողալով,—ամբողջը միասին, շարք-շարք, կամ շղթայի նման, մաս-մաս և մէկ-մէկ:

214. Մարտական զօրակարգի դէպի ետ տեղափոխութեան ժամանակ վաշտապետը,

ընտրելով թիկունքում մի զիրք, հրամայում է նախօրօք պահեստին կամ շղթայի շրջաններից մէկին այդ զիրքը բռնել: Միայն այն ժամանակ, երբ նախօրօք ետ զընացած զօրամասը կրակ բանալու արդէն պատրաստ լինի, պէտք է տալ ետ շարժելու հրամանը:

Շղթայի շրջանները նահանջելիս պէտք է աշխատեն, որքան կարելի է շուտ բաց անել թիկունքում զիրք բռնած զօրամասի ճակատը, որպէսզի հնարաւոր լինի այդ զիրքից շուտով կրակ բանալ:

### ՇՂԹԱՆ ՈՒԺԵՂԱՑՆԵԼԸ:

215. Շղթան ուժեղացնելու հրամանը կարող է բղխել մենակ վաշտապետից որը պէտք է, պահեստից այդ համար մի մաս նշանակելով, մատնացոյց անի նրա զլխաւորին գործողութեան նպատակը և ուղղութիւնը:

216. Շղթան կարելի է պահեստից ուժեղացնել՝ երկարացնելով կամ խտա-



ցն ելո՞վ: Առաջին դէպքում՝ շղթան ուժեղացնող ջոկատը կազմում է առանձին մի նոր շրջան շղթայի թևերից մէկի վրայ: Երկրորդ դէպքում՝ նա ցրւում է շղթայի առանցքների (տարածութիւնների) մէջ (ձուլւում է շղթայի հետ):

217. Շղթան ուժեղացնելու նշանակւած ջոկատի պետք է կամ իսկոյն շղթայ է կապւում տւած ուղղութեամբ, կամ նախօրօք՝ ծածուկ կերպով առաջանում է իր ջոկատի հետ մինչև շղթայ կապելու յարմար տեղը:

218. Երբ շղթան ուժեղացնում են խրտացնելով, տարբեր զօրամասերի զինւորները իրար հետ խառնւելը անխուսափելի է: Այդ դէպքում, եթէ վաշտապետի կողմից հրաման չէր եղել, շղթայի մէջ գտնւած ջոկատների և բաժանմունքների պետերը իրանք առնում են իրանց հրամանատարութեան տակ, իրանց շրջանների մէջ մտած զինւորներին, բայց եթէ ուժեղացնող մասի հետ աւագագոյն մի անձ գայ

շղթայի մէջ, այդ դէպքում շրջանի պետը մանում է նրա հրամանատարութեան տակ:

Ծանօթ. Աւագութիւնը համարւում է պաշտօնով, իսկ հաւատար պաշտօնների ժամանակ՝ աստիճանով:

Հէնց որ հնար լինի, պէտք է խառնւած զինւորներին իրանց ջոկատներով, բաժանմունքներով և օղակներով զատել:

### ՄԱՐՏԱԿԱՆ ԶՕՐԱԿԱՐԳԻ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ:

219. Մարտական կարգի ուղղորթիւնը փոքր անկիւն աչափ փոխելու համար տեղի վրայ կամ շարժման միջոցին, վաշտապետը համապատասխան հրամաններ է տալիս ջոկատներին, ցոյց տալով դործողութեան նպատակը և նոր ուղղութիւնը և նշանակելով ուղղութիւն տուող ջոկատը:

Ուղղութիւն տուող ջոկատը վարւում է ինչպէս սահմանւած է յօդ. 135 և 136-ում: Շղթայի մնացած ջոկատների պետերը, տե-



ղափոխում են նրանց նոր գծի վրայ՝ համակերպելով ուղղութիւն տուող ջոկատի հետ:

Պահեստի հրամանատարը, եթէ առանձին հրաման չստանայ, տեղափոխում է պահեստը շղթային համապատասխան (յօդ. 213) և հաղորդում է այդ մասին վաշտապետին:

220. Երբ անհրաժեշտ է ուղղութիւնը մեծ անկիւն աչափ փոխել, յարմար է՝ նոր շղթայ կապել պահեստից, իսկ նախկին շղթայի ետ կանչած մասից, եթէ հարկաւոր է, նոր պահեստ կազմել:

#### ԳՐՈՋԸ ԵՒ ՍԻՒՆԻ ԶԱՐԿԸ:

(Атака и удар в штыки)

221. Վաշտի մարտական գորակարգի գրոհը (ատական) և սիւնի զարկը կարող է կատարւել՝ կամ շղթայով, և նոյնիսկ շղթայի մի մասով՝ առանձին, կամ շղթայով և պահեստով միասին:

222. Գրոհը շղթայով առանձին

կատարւում է՝ ջոկատի համար յօդ. 137—142 մատնանշածի համաձայն: Պահեստը հետևում է շղթային, միշտ պատրաստ ներքան օգնելու:

Երբ հարկաւոր է թշնամու վրայ գրոհի գնալ շղթայի մի մասով, վաշտապետը համապատասխան հրամաններ է տալիս ջոկատներին պետերին: Տեղի վրայ շղթայի մէջ մնացած ջոկատները իրանց կրակով պէտք է աջակցեն գրոհին:

223. Երբ պահեստին՝ շղթայից առանձին գրոհի գնալու հրաման է տրւած, նա պէտք է որքան կարելի է թշնամուն մօտենայ (յօդ. 213) և մօտ 50 քայլ հեռաւորութիւնից յարձակւի սիւներով:

224. Շղթայի և պահեստի միասին գրոհի համար վաշտապետը նախագգուշացնում է այդ մասին ջոկատներին, ցոյց է տալիս գործողութեան նպատակը և առջադրած հարւածի ուղղութիւնը և հրամայում ք պահեստին՝ մօտենալ սեղմ շղթային (վազիսով, սողալով):



Այդ կատարելուց յետոյ, թշնամու հե-  
աւորութեանը նայած, վաշտապետը հրա-  
մայում է միաժամանակ թէ շղթային և թէ  
պահեստին կամ անմիջապէս տեղից սւի-  
ներով զարկել (եթէ տարածութիւնը մօտ  
50 քայլ է, յօդ. 139), կամ միասին զրոհի  
շարժել, որը կը վերջանայ սւիների զարկով  
(յօդ. 140 — 141):

225. Գնդացիները, վաշտի զրոհի ժա-  
մանակ, շարունակում են զնդակահարել  
թշնամուն մինչև որ յառաջ խաղացող ջո-  
կատները նրանց կրակի ճանապարհ փակեն.  
զրանից յետոյ, եթէ ուրիշ հրաման չլինի,  
նրանք ելնում են ղիբքից և հետևում են  
վաշտին, օրպէսզի կարողանան, հէնց որ  
հնարաւոր լինի, նորից կրակ բանալ:

226. Թշնամու ղիբքին տիրանալով, վաշ-  
տապետը ջոկատների սլետներին (և նոյնպէս  
զնդացիներին գլխաւորին) թշնամու դէմ  
գործողութիւնների մասին հրամաններ է  
տալիս՝ (նրան սւիներով կամ կրակով հե-  
տապնդելու, ղիբքը բռնելու և ամրացնելու,

թշնամուն օգնութեան հասնող օժանդակ ոյ-  
ժերը ղիմաւորելու և ուրիշ գործողութիւն-  
ները կատարելու համար), կամ՝ վաշտը կարգի  
բերելու և թշնամու դէմ ընդհանուր զօրա-  
կազմից հետադայ գործողութիւնների հա-  
մար հաւաքում է վաշտը:

### ՎԱՇՏԻ ՀԱՒԱՔԸ

227. Վաշտի հաւաքը՝ մարտական կարգից  
կատարւում է՝ ջոկատներով զօրակազմի  
ցոյց տաւած հաւաքի համաձայն (յօդ. 189):



## Խ Ր Ա Տ

### ՌԱԶՄԻԿԻՆ ԿՈՒԻՏ ԱՌԱՋ

Ամեն մի ռազմիկ պէտք է հաստատ իւրացնի կռի համար՝ հետեւեալ ընդհանուր ղեկավար հիմունքները:

1) Անձդ գոհի՛ր, բայց ընկերոջդ ազատիր:

2) Առաջ ընկի՛ր, թէկուզ առջևիններին զարկեն էլ:

3) Մի՛ վախիր կորչելուց, որքան էլ դժար լինի կացութիւնը. անպատճառ կը յաղթէս:

4) Եթէ քո զրութիւնդ դժար է, թշնամունն էլ հեշտ չէ, գուցէ աւելի ևս դժար. դու քոնը տեսնում ես, իսկ թըշնամունը ոչ: Երբէք—վհատութիւն, այլ մի՛շտ—յանդգնութիւն և յամառութիւն:

5) Պաշտպանելու միջոցին պէտք է ոչ միայն թշնամու հարձակումները ետ մղղել, այլ և հարձակել. պաշտպանելու ամենալաւ միջոցն է—ինքնին հարձակել:

6) Կռի մէջ ջարթում է տոկունը և համարձակը, ոչ թէ՛ ուժեղը և հնարագէտը: Յաղթանակը միանգամից չի տրոււմ, թըշնամին նոյնպէս կարող է դիմացկուն լինել. երբեմն չի յաջողոււմ նրան կոտորել և երկու, երեք անգամից յետոյ. այդ դէպքում պէտք է հարձակել չորրորդ և աւելի անգամ, մինչև որ նպատակին հասնենք:

7) Աւել կամ պակաս հմուտ կարգադրութիւնները հեշտացնում են պակաս կորուստներով նպատակին հասնելը: Իսկ հասնում է նպատակին մենակ նա, ով որ նախընտրել է մեռնել, քան նպատակին չհասնել:

8) Նպատակին հասնելու ճանապարհին ինչ տեսակ անսպասելի խոչընդոտներ պատահեն էլ, պէտք է մտածել նրանց յաղ-



Թահաբելու և ոչ թէ գործի դժւար լինելու մասին:

9) Կանոնաւոր զօրամաս չունի ոչ թե ոչ թիկունք, այլ ամեն տեղից ճակատ, որտեղից որ թշնամի կայ:

10) Ուրջան էլ անակընկալ կերպով յայտնւի թշնամին, չպէտք է մոռանալ, որ նւրբան կարելի է հարձակել կամ սւինով, կամ կրակով: Այս երկուսից ընտրութիւն կատարելը դժւար չէ, իսկ զօրակագմի ձևը արդէն երկրորդական հարց է: Եթէ թշնամին մօտիկ է—հարձակել միշտ սւիներով, եթէ աւելի հեռու է—գետ կրակով, յետոյ սւիներով:

11) Չը կայ այն տեսակ դրութիւն, որից կարելի չլինէր պատուով դուրս գալ:

12) Կուի մէջ փոխանորդ չկայ. ենք ընկել ես կուի մէջ, պիտի մնաս մինչև վերջ. օգնութիւն կարող է լինել, բայց փոխանորդ երբէք:

13) Կուի միջոցին մտածիր առողջների մասին. միայն թշնամուն յաղթելուց յետոյ՝

յիշիր վիրաւորներին: Ով որ կուի ժամանակ հոգատարութիւն է անում վիրաւորների մասին և թողնում է շարքերը—վախկոտ է, ոչ թէ սրտացաւի մէկը: Վիրաւորներին վերցնելու համար յատուկ մարդիկ կան:

14) Եթէ դու գլխաւոր ես, մի խառնւիր ստորադրեալի գործին, եթէ տեսնում ես որ նա հասկացողութեամբ է առաջ տարւում: Կուի մէջ սեփական գործն էլ հերիք կը լինի: Ով որ ընկնի այն բանի ետեից, որ ուրիշը պէտք է կատարի, սեփական գործին չի հասնի: Ամեն մի առօրեական զինւորական պէտք է սեփական ինքնուրոյնութեան և պատասխանատւութեան շրջանը ունենայ. եթէ առաջինը չը ճանաչես, երկրորդն էլ պէտք է վերցնես Բայց հրամանատարը պէտք է հետևի, որ ամեն մէկը իր գործը կատարի և թողութիւն չտայ:





**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՁԻՑ ԵՒ ՑԱՆԿ**

Հետևակ Զօրակազմի կանոնագրքի հատ-  
աժօրէն թարգմանութիւնով մենք ցանկա-  
ցել ենք տալ հայերէն կօմանդների օրինակ-  
ները, հայերէն լեզուով զինւորական որոշ  
հիմնական հասկացողութիւնները և տէրմին-  
ները և հետևակ զօրքի կազմի և մարտական  
կարգի կանոններն և նկարագրութիւնը:

Հայերէն կօմանդները մասամբ գործ են  
ածել արդէն մեր կամաւորական խմբերի  
մէջ: Մենք օգտուում ենք նրանցից—ընտ-  
րութիւն կատարելով, խմբագրելով և լրա-  
ցնելով ուսու կանոնագրքի համեմատ: Կօ-  
մանդների առջև դրած թւանշանները, ինչ-  
պէս և զրքի բոլոր միւս թւանշանները,  
համապատասխանում են ռուսերէն բնագրի  
յօդւածներին:

Կօմանդների կատարողութեան նկարա-  
գրութիւնը, չափազանց կարևոր նկատելով  
հանդերձ, թողնում ենք առայժմ առանց  
թարգմանութեան:

Նախապատրաստական կօմանդը տպւած է  
փոքրատառ իսկ կատարողականը--գլխատառ:

Յօդ. 30—Տեղըդ (На месте) կօմանդի  
փոխարէն կարելի է գործածել Տեղում ձեւը:

Յօդ. 60, 64, 65 և ուրիշ—միջինին (մի-  
ջինից) բառի փոխարէն կարելի է գործածել  
կենտրոնին (կենտրոնից) բառը:

Թարգմանւած են կանոնագրքի հետեւեալ  
ամենաանհրաժեշտ մասերը:

Զօրակազմ եւ նրա ղեկավարու-

|                                        |         |
|----------------------------------------|---------|
| Թիւնը . . . . .                        | էջ 3—8  |
| Կօմանդ . . . . .                       | » 9—17  |
| Նախնական վարժութիւնից:--Կրակ . . . . . | » 18    |
| Ճրիւ զօրակազմի վարժութիւն . . . . .    | » 18—26 |
| Ջոկատի վարժութիւնից:--Խիտ զօ-          |         |
| րակազմ . . . . .                       | » 27—31 |
| Ճրիւ Զօրակազմ . . . . .                | » 31—52 |
| Վաշտի վարժութիւնից:--Խիտ զօ-           |         |
| րակազմ . . . . .                       | » 53—58 |
| Վաշտի մարտական զօրակազմը . . . . .     | » 59—79 |
| Խրատ ռազմիկին կուից առաջ               |         |
| (Դաշտային կանոնագրքից) . . . . .       | » 80—83 |



2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0049160

21749







